

Թեամբ միացեալ խորհուրդը վճռել է նո-  
րից ներկայացնել լայնատազին 1877 թուա-  
կանի առևտրական դաշնագիրը Գերմանիա-  
յի և Ռուսիայի մէջ: Գաշնագիրը բաղ-  
կացած է 25 յօդուածներէ: Նա կապած է  
10 տարի ժամանակով և, եթէ այդ ժա-  
մանակամիջոցի ընթացքում չը փոփոխվի,  
դարձեալ մի տարի ոյժ կունենայ: Նա վա-  
ղուց հաստատութիւն է Ռուսիական օրէնս-  
դրական ժողովից, բայց պէտ չէ ներկայաց-  
րած գերմանական լայնատազին և այդ  
պատճառով նշանակութիւն չունի:

Յունիսի 12-ին Վիլհելմ կայսրը հասա-  
ւան, որտեղ նրան դիմաւորեցին շվեդական  
թագաւորը և տեղական իշխանութիւնը:  
Կայսրի ընդունելութեան համար քաղաքը  
շատ գեղեցիկ զարդարված էր:

Շուտով կը դադարեն պարլամենտի նիս-  
տերը Բեռլինի մէջ: Այժմեան պարլամենտը  
ամենքին ձանձրացրեց, այնպէս որ նրա  
նիստերին շատ քիչ այցելուներ էին գնում:  
Երբ հարկաւոր էր լինում քուէարկել որ և  
է հարց, պարլամենտի անդամները բացա-  
կայ էին գտնվում, իսկ մնացածները չէին  
կարողանում որ և է վճիռ կայացնել: Այդ  
իրողութիւնը շատ էր վնասում ընթացիկ  
գործերի կարգադրութեանը:

Իշխան Բիսմարկ, տեսնելով, որ այժմեան  
պարլամենտը չէ հաստատում իր առաջար-  
կած միջոցները, կամ ամբողջապէս նրանց  
մերժում է, կամ աղաւաղում, նրանից շատ  
անբաւական է և կամենում է, որ պարլա-  
մենտի անդամները նրա հնազանդ կուսա-  
կիցները ընտրվեն:

Պարլամենտի ապագայ անդամների ըն-  
տրութիւնները կատարելապէս գրաւել են  
գերմանական քաղաքական շրջանների ու-  
շագրութիւնը: Բացի պարլամենտական կու-  
սակցութիւններից, կառավարութեան ան-  
դամները և մինիստրները ցանկութիւն են  
յայտնում ընտրվել, գովելով կառավարչա-  
կան քաղաքականութեան բարիքները: Այդ  
ձևով էր խօսում Ֆրիանսների մինիստրը,  
որ նկատեց, թէ իշխան Բիսմարկի Ֆրիան-  
սական վերանորոգութիւնները ապահովում  
են երկրի ֆրիանսների դրութիւնը:

Ընտրութիւնների հետեանքները գծուար  
է նախագուշակել: Կան մի քանի տեղեր,  
ինչպէս Էլզաս և Լոտարինգիա, որտեղ կա-  
ռավարչական կանգնողները չեն կարող  
ընտրված լինել: Էլզասի և Լոտարինգիայի  
բնակիչները ներկայումս այնպէս են բողո-  
քում գերմանական քաղաքականութեան և  
տիրապետութեան դէմ, որքան տաս տարի  
առաջ, երբ այդ նահանգները խլկեցան  
Ֆրանսիայից և միացվեցան Գերմանիայի  
հետ:

ԱՆՔԻԻԱ

Նորերումս անգլիական լրագիրները հրա-  
տարակեցին իրանդիայի մէջ մայիս ամսվայ  
ընթացքում պատահած կալուածական յան-  
ցանքների վիճակագրական տեղեկութիւն-  
ները: Մայիսին 337 կալուածական յանցանք  
է պատահել, ապրիլին 295, մարտին 146, իսկ  
անցեալ տարվայ դեկտեմբերին 869: Իսկապէս  
այս վերջին թուանշանը կարող է մեծանայ,  
եթէ գործերի այժմեան դրութիւնը կը շա-  
րունակվի: Անկարգութիւնները ամեն տեղ  
տարածվում են: Կորկի կոմսութեան մէջ  
պոլիցիան մի մարդ կալանաւորեց, որ ան-  
կարգութիւն էր գործում: Այնտեղ հաւաք-  
ված ամբոխը շրջապատեց պոլիցիային և,  
քարեր խփելով ու փայտերի հարուածներով  
նրան հեռացրեց: Քարերը կարկուտի նման

էին թափվում: Պոլիցիականները մերկացրին  
սուրճանը և երկու կողմից էլ շատ մարդ  
վիրաւորեցաւ:

Մինչև անգամ երբ պոլիցիականները գը-  
նացին իրանց գորանոցները, այնտեղ էլ չը  
կարողացան հանգիստ ձաշել, որովհետեւ  
բոլոր ժամանակ պատուհանների վրա քա-  
րեր էին պոստ: Պոլիցիականներից ոչ մէկը  
անվերջ չը մնաց: Այդ անկարգութիւնները  
Կորկի կոմսութեան մէջ բոլորովին անպա-  
սելի կերպով պատահեցան:

Տիպերարի մէջ ամբոխը այնպիսի ցոյցեր  
արաւ ի պատու Կրօկ եպիսկոպոսի, որ կա-  
լուածական միութիւնը դեռ երբէք չէ ա-  
րել: Ամբողջ քաղաքը զարդարված էր դրօ-  
շակներով, ծաղիկներով և կանաչով: Երկա-  
թուղու կայարանի մօտ նրան ընդունեցին  
երաժիշտներով և այնտեղից տարան մինչև  
եկեղեցին, որի մօտ պատուած եպիսկոպոսի  
համար ամբիօն էր շինված: Այդ ամբիօ-  
նից նա մի ձառ արտասանեց, որ ողևորու-  
թեամբ ընդունվեցաւ 4,000 մարդուց բաղ-  
կացած ամբոխից: ձառի սկիզբը շատ յար-  
ձակողական էր: Այնուհետեւ եպիսկոպոսը  
յիշեց այն ծառայութիւնները, որ իրան-  
դական ժողովուրդը մի ժամանակ արել է  
եւրօպական քաղաքականութեանը, իսկ ին-  
քը հալածվել է առաջ անդուժ գանիացի-  
ներից, իսկ յետոյ անգլո-սակսիցից: Չը նայե-  
լով այդ հալածանքներին, իրանդացիները  
մինչև այժմ ուժեղ, անյաղթ և անզուսպ  
ժողովուրդ են մնացել: Կրօկ առաջարկեց  
իրանդացիներին հաստատ կաղմակերպու-  
թիւն և լուսաւորութիւն, իբրև ամենա-  
լաւ դէպք ընդգիւժողութեան համար և  
զգուշացրեց ամբոխին անմիտ գործերից:

Եպիսկոպոսը իրանդացիների առաջնորդներ  
է համարում «անմահ» Պարնելին և հա-  
մայնքների ժողովի առաջադէմ կուսակցու-  
թեան անդամներին, որոնց նա խորհուրդ  
տուեց ընդունել կալուածական օրինակի՝  
եթէ ժողովը նրան խմբագրէ: Ինչքան էլ  
այդ օրինակի թերի լինի, այնու ամենայ-  
նիւ իրանդացիների համար դա մեծ առա-  
ջագիւժութիւն է: Կալուածական օրէնքի  
ընդունվելուց յետոյ միութեան գործունեու-  
թիւնը աւելի մեղմ կը լինի: Այնուհետեւ  
եպիսկոպոսը խորհուրդ տուեց իրանդացի-  
ներին չընդգիւժանալ գործերին և չը միջա-  
մտել ֆրիանսներին արտաքսելու ժամանակ:  
Իրանդացիները պէտք է գիտեն Ամբիկայի  
և Եւրօպայի հասարակական կարծիքի օգ-  
նութեանը և ասան գործերի այժմեան  
դրութիւնը, որ անտանելի է: Եպիսկոպոսը  
նկատեց, որ նա չէ ցուակցում այն ֆրի-  
մերներին, որոնք միջոց ունեն կալուածա-  
կան վարձը վճարելու համար և չեն վճա-  
րում, այլ խղճում է նրանց, որոնք վճա-  
րելու միջոց չունեն և այնու ամենայնիւ  
նրանց արտաքսում են: «Անգլիան, որ ա-  
զատութեան օրօրոցն էր համարվում, ա-  
սաց նա վերջը, վիրաւորում և անպատուում  
է ազատութեանը ներկայումս գործադրած  
միջոցներով:»

Իրանդական երգիչալ գատաւորները չեն  
բաւականանում իրանդացի ֆրիմերներին  
արդարացնելով, այլ մեղադրում են պոլի-  
ցիականներին անկարգութիւնների պատճառ  
դառնալու համար: Մի պոլիցիական պատ-  
ժի ենթարկվեցաւ նախատեսված սպանու-  
թեան համար, որովհետեւ անկարգութիւն-  
ների ժամանակ նա մահացու կերպով վիրա-  
ւորել էր մի ֆրիմերի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՏՆԵՐ

Կ. Պոլիս, 3 յունիս 81

Երկու երեք օրէ ի վեր բաւական մտատան-  
ջութիւն. Վ ազ թ կը հազարդէր թէ կառավա-  
րութեան ընդունած հեռագրին համեմատ 34  
գիւղեր վանայ լինի արեւելեան կողմը կործա-  
նեւ են մեծ երկրաշարժէ մը, Բայց ոչ պատրիար-  
քարանը, ոչ Միացեալ ընկերութիւնը տեղեկու-  
թիւն չէին առած. Կ. Պոլսէն քաջուած հեռա-  
գրիներուն պատասխան չը կար և դեռ չը կայ-  
կը կարծէինք թէ Թեղուտի երկրաշարժն է որ  
թիւրք թերթը կը շփոթէ այժմ վանայ  
հետ: Հիմայ Stamboul սուտ կը հանէ Վ ազ թ ի  
լուրը երկրաշարժ մը ազատեցանք:—

Այս առաւօտ Կ. Պոլիս հասաւ Անգղիոյ նոր  
դեսպան լորդ Տըֆթըն: Կրտսի թէ յունական  
հարցը վաղը վերջնական կերպով կը լինայ, և  
կարգը կուգայ մեր հարցին:— Ինքզինքնիս չենք  
կրնար խտրել, մեր խնդրոյն չուտով լուծում  
գտնելուն չենք սպասեր. ինչպէս որիչ ատեն  
կը լուծ ենք, կառավարութիւնը պատրաստ է  
ամեն միջոցներու դիմել որպէս զի Հայաստանի  
մէջ եւրօպական տէրութեանց միջամտութեամբ  
բարեկարգութիւնը գործադրելու վտանգին առ-  
ջնը առնէ: Կուրը ունի իրեն յատուկ ծրագիր-  
ներն բարենորոգմանց համար. այդ ծրագիրնե-  
րուն երկուքն ինչ որ ալ ըլլայ, միշտ այնպէս  
չինուած են որ ուրիշ ձևի մը տակ շարունակին  
այն քաղաքականութիւնը զոր յարատեւութեամբ  
այսքան ատեն է ի գործ կը դնեն ի Հայաստան  
և ի Վրկիկա:—Թիւրք թերթերը սկսած են նա-  
խերգանքը. Հ ազ թ անցեալ օր իրանդայի  
վիճակը նկատողութեան կառնէր, շատ անտա-  
նելի կը գտնէր զայն և կը հետեցնէր թէ չերբ  
Մեծն Բրիտանիա իր երկրին կարողը մէկ մասը  
բարեկարգելու այնքան կարօտ է, կեղէ հայոց  
վիճակը բարեկարգելու խնդրով զբաղել: Միթէ  
հայերու վիճակը ճանկաստանի մէջ ամենապա-  
տուական չէ:—Ինչ կրնանք ըսել թերթի մը,  
որոյ խմբագիրներն կը գրեն այնպիսի բաներ,  
որոյ ոչ իրենք կը հաւատան, ոչ կարգացող  
թերթերը, ոչ կարգացող քրիստոնեայնները:—Ահ-  
մէջ Միջագետքէն, որ Թարթուսի դերը կա-  
տարելու յարմարութիւնները միշտ փորձով ցոյց  
կուտայ, մեր խնդրոյն մէջ վրանշտու բաց կեր-  
պով կը կեղծէ:— Իսկ Օսման լը գիւտնագի-  
տութեան կը դիմէ: Բարիցի գաշնագրին փոշի-  
ները կը սկսի թոթվել և այդ գաշնագրին 9-դ  
յօդուածին վրա կը թնկնուի, կուգայ Եւրօպայի  
հարցնել թէ, որ իրաւամբ պիտի միջամտեն  
ճանկաստանի ներքին բարեկարգութեանց գոր-  
ծոյն. (Հայկական բարեկարգութիւնը ըսել է կը  
զգուշանան): «Յիսուս և վեցի գաշնագրի 9-րդ  
յօդուածը, կըսէ Օսման լը, ոչ ջնջուած է և  
ոչ փոփոխված Բեռլինի գաշնագրովը, ուրեմն  
նա գորութիւն ունի ամբողջապէս. այդ յօդու-  
ածը միակ միջոցն է որ կերպաշաւուրէ արդիւնա-  
ւոր կերպով Կայսրութեան վերածնունդը:—»

Օսման լը միջամտածի կերպով կը մտէ թէ  
ինչ երջանիկ օրեր անցուց Թիւրքիա այդ գաշ-  
նագրի շնորհիւ:—Անուշտ Սուլթանի օրգանը  
իրաւունք ունի արտօնել և փնտռել անցեալ մը,  
յորում առանց պատասխանատուութեան կարող  
էին քրիստոնէից արեւելը ծծել, և ապականեալ,  
ծոյլ բարբարոս ժողովուրդ մը կրնար մեր քը-  
տնիքովը և մեր արեւնովը մտնել: Վ ազ թ ալ  
եւ չը մնար և նա ալ ընչիտական քաղաքակա-  
նութիւնը առաջ կը քշէ: Ըստ Վ ազ թ ի, Բէտր-  
պուրի պատրաստուել է Հայաստանի բարեկար-  
գութեանց ծրագիր մը, որոյ գործադրութիւնը  
պիտի պահանջէ Ռուսիա:— Վ ազ թ կուզէ  
միտիւթաբէլ իւր ժողովուրդը, ցոյց տալ թէ Հա-  
յաստանի բարեկարգութիւնը անհարկն են,  
վասն զի Անգղիա և Ռուսիա տարբեր շահեր  
ունին Հայաստանի մէջ, ինչ ծրագիր որ Անգ-  
ղիա իրեն օգտակար սեպէ, Ռուսիա զայն իրեն  
համար վնասակար կը գտնէ և փոխադարձ:—  
Սակայն Վ ազ թ ի գթաբողութիւնն այս այս-  
պէս չէ:— Իբր շատ ստոյգ կը դրուցուի թէ  
Անգղիա նախապէս ամեն տէրութեանց հաւա-  
նութիւնը առած է և անոնց կողմանէ գործելու  
լիազօր իշխանութիւն ստացած է: Ֆրանսայի և  
Ռուսիոյ դեսպանները, արձակուրդ առնելով քիչ  
օրէն կը մեկնին Կ. Պոլսէն:

ձիշտ երեք տարիներ են գրեթէ օրը օրին, որ  
Բեռլինի գաշնագրին ստորագրուեցաւ. ինչ երազ-  
ներ ունեցանք նոյն օրերը. սակայն անկէջ վեր-  
ջը շատ դառն պատրանքներ մեզ պահված էին

և սկարութիւննիս համբերութիւն կարծելով կը  
միտիւթաբէլ: Այս երեք տարիներու մէջ կըր-  
նայինք ուրիշ կերպ գործել, բայց շատ սխալներ  
ըրինք. սակայն անցեալը անցեալ է, ողբալու  
ասան չէ:—Այժմ բոլոր մեր յոյսը դիւանագի-  
տութեան վրայ է. ծրագիրներ պատրաստել, նոր  
նոր ձեռնարկներու յոյսերով խարուիլ անօգուտ  
է: Թշնամուցն հետ ճակատ առ ճակատ ենք: Ա-  
հաւաստիկ խելացի կերպով շարժելու օրերնիս,  
գրեթէ ամեն աչքեր մեր վրայ պիտի նային,  
շատ թաքուն հարուածներ ալ պիտի տրուին  
մեզ, և ոչ գիտէ ինչքան օտար է կըր զմեզ պատա-  
րակելու համար պիտի մրտուին:—Մեր ամենէն  
մեծ խոհեմութիւնը պէտք է ըլլայ Ներսէսի շուք-  
ջը բոլորիլ, ամեն կերպով նորա նեցուկ ըլլալ:  
Ներսէսի ազգին մատուցած ամենէն մեծ ծառա-  
յութիւններէն մին սա եղաւ, որ իր օրովը աշ-  
խարհիս ամեն կողմի հայերը համերաշխութիւն  
մը ունեցան, մեծ միաբանութիւն մը տիրեց մէ-  
ջերնիս և մեր առաջնորդին, Կ. Պոլսոյ պատ-  
րիարքը, տաղալմանը հետամուտ չեղանք, երկու  
հաւասար բանակներու չը բաժնուցանք:

Ինչ պիտի ըլլայ վաղուան Ազգ ժողովը, ար-  
դեօք յետին պահուն ինչքը պիտի կորսնցնէ:—  
Վ երջին տեղեկութեանց նայելով, այս շարքի բա-  
ւական փոփոխութիւն եղեր է մտաց մէջ, և անոնք  
յոր այս նստին անպատճառ պատրիարքը հրա-  
ժարեցնելու պիտի աշխատեն, կըսուի թէ իրենց  
դիտաւորութիւնն ետ պիտի կենան, հասարա-  
կաց կարծիքն վախնալով: Երանի թէ շիտակ  
ըլլար այս լուրը:

Երեսփոխանական վերջին ընտրութիւններ Ե-  
ղան, բաւական խելքերնին զուլանին խոհեմ  
մարդեր ընտրուեցան:—Այս նստին պիտի ըն-  
տրուի ժողովքին նախագահը, որ տարուան մը  
համար պաշտօն կունենայ: Ապահովապէս նախա-  
գահը Բ. Կրան էֆէնդիներէն ոչ ոք պիտի ըլլայ,  
Մերիէմ-Կուլի պ. Յարութիւնի ընտրութիւնը  
գրեթէ ապահովուած է:

Նամակս այս երեկոյն փակելու ստիպեալ եմ,  
վաղուան եղածները շարքի աւուր թղթատարով:  
Քանի որ Հայկական խնդրին օրակարգն է, ալ  
քիչ մը յաճախ նամակ պիտի գրենք, մասնաւոր  
որ այս տեղի հայ ու եւրօպացի թերթերն հրա-  
հանգ պիտի ընդունին լուել այս խնդրոյն վրայ:  
Այս վայրկեանի կը լսեմք թէ Հաճքն (Կիլի-  
կիոյ մէջ) բաւական ծանր դէպքեր տեղի ունե-  
ցեր են հայոց և թրքաց մէջ. հոս տեղի հաճքն-  
ցոց մէջ շատ իրարանցում:—Մանրամասնութիւնք  
յաջորդով:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 14 յունիսի «Правит.  
Вѣстн.» լրագրի մէջ հրատարակված է  
Բարձրագոյն հրաման գործերի հագուստը  
փոխելու և նրան պարզ ձև տալու համար  
ինայողական նպատակներով: «Голосъ» լը-  
րագիրը հաղորդում է, որ մի առանձին  
մասնագործով է նշանակված արտաքոյ կար-  
գի միջոցներ կազմակերպելու համար:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 12 յունիսի Պետական  
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-  
ժէ 96 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 50 կ.,  
երրորդ 94 ռ. 50 կ., չորրորդ 94 ռ. 62  
կ., ներքին 5% առաջին փոխառութեան  
տոմսակը արժէ 225 ռ. 50 կ., երկրորդ 219  
ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմ-  
սակը արժէ 93 ռ. 12 կ., երկրորդ 92 ռ.  
87 կ., երրորդ 92 ռ. 87 կ., սակի 8 ռ. 15  
կ.: Ռուսաց 1 լուրը Լոնդոնի վրա արժէ  
24,45 պէնս, Ամստերդամի վրա արժէ 209  
մարկ, Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 87  
սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ